ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 369 - Ա

04 հոկտեմբերի 2019 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով գույքի հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Սևակ Դվոյան - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, նախագահ

Վալերիկ Հոդաբաշյան – Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ

Բուրմունք Հովհաննիսյան –Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Հրանուշ Հարությունյան - հանձնող

Ջիվան Ֆիդոյան - ընդունող

2. Հանձնաժողովին՝ գույքի հանձման-ընդունման աշխատանքներին նաև ընդգրկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Սևակ Դվոյանին:

04.10.2019

ՄԱՐԶՊԵՏ

Подписано SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ